



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

LGA

1168

~~1999~~ m-mor

1999

43845-Ա.Հ.

ՅՈՐԴՈՐԱԿ

ՔԱՐՈՉԵՈԼ Ի ԺՈՂՈՎԻ ԵՐԻՑԱՆՑ

61

ՔԱՐՈՉԵՈԼ Ա.Ի.ՏՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՅ ԽԱՐԲԵՐԴՈՒ

“Տերության ժողով նենդութիւններ կատարող անձնեալ ըլլու”  
Երեսուն գլ. Խճ. 10:

6/6

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲՅԱ ՊՕՅԱՑԵԱՆ



9(28233-62)

Գ. 5.2

## ՅՈՐԴՈՐԱԿ

ՔԱՐՈՉԵՈԼ Ի ԺՈՂՈՎԻ ԵՐԻՑԱՆՑ

ԵՒ

ՔԱՐՈՉՉԱՅ Ա.Ի.ԵՏԱՐԱՆԱՆ ՀԱՅՈՅ ԽՍ.ԲԲԵՐԴՈՒՈՒ

“ՏԵՐԴԸ ՀԱՐՁԸ ԿԵՆՔՆԵՐԵՐԵՐԵՐ ԽԱՐՄԱՐՈՒՅ ՌԱԽԵԼ ՇԱՀԵՆ”  
ԵՐԿՐ. ԳԼ. ԽԸ. 10:

Իմ պաշտօնակիցներս և մեղսակիցներս, ինձի հարկ չերևար որ առ այժմ երկայն քննութիւններ ընենք աս պատգամին ի՞նչ պարագայի տակ խօսուելուն վրայ, հերիք կը սեպեմ որ գիտնանք թէ՝ Աստուած իր օրէնքներովը և մարդարէներու ձեռքով յայտնած իր մասնաւոր պատգամներովը, և կամ նախախնամական տընօրէնութեամբ, ազգեր կամ անհատներ իւր անայլայլելի կամքին գործադրութեան պաշտօնեայ կը կարդէ և ան պաշտօնեաները որոնք որ Աստուծմէ իրենց յանձեալ գործը իր պահանջմանը պէս չեն կատարեր սոսկալի անէծքի տակ կը ձգէ: Նմանապէս Բանն Աստուած Աւետարանի պաշտօնեաներուն յանձնած գործ մը ունի և մեր բնաբանին սպառնալիքը անոնց համար ալ ահոելի և միանգամայն օդտակար

1170 11 68. ԱՅ

Հ. Ա. Պ. Ա. Պ.



Խօսք մըն է . և ասկէ օդուտքաղելու համար՝  
պիտի ջանամ հետեւեալ երեք հարցումներուն  
պատուխանելու :

- Ա. Տէրոջը ժործը, ի՞նչ է :
- Բ. Նենդունեամբ էադարոյը, ո՞վ է :
- Գ. Մէջեալ ըլլայ, ի՞նչ ըսել է :

### Տէրոջը ժործը, ի՞նչ է :

Տէր Եհովան աս աշխարհիս վրայ Գործ—մեծ  
ու երսելի գործ ունի :

Ինքը մեղաւորին մեռնիլը չուզէր, կ'ուզէ որ  
ամէնքը դարձի դան ու ապաշխարեն . կ'ուզէ որ  
իր Միածին Որդւոյն հաւատան, և Անով մեղքէն  
ու մեղքին հետեւութենէն աղատելով՝ երկինքին  
փառքն ու ուրախութիւնները վայելեն : Կ'ուզէ  
որ իր Հոգին ունենան, որ անով ամէն կերպ  
չարութենէ փախչին , ու երկիրս երկինքին  
նմանի : Բայց խեղճ մարդկութիւնը՝ տգիտու-  
թեամբ կը մերժէ աս փառաւոր հրաւէրը, մտիկ  
չեներ աս քաղցր ձայնին . մէկդի կ'ընէ իրեն  
երկնցած աս բարի ու ողորմած բազուկը . և իր  
սրտին խարէութեանը մտիկ ընելով, իր կամա-  
կորութեամբը, մեղքին մէջյարատելելով՝ յաւի-  
տենական կորստեան կ'երթայ: Մեր բարերար  
Հայրը երկայնամիտ կ'ըլլայ, թէպէտ իր սրբա-  
զան ձայնին մտիկ չեն ըներ, այսուամենայնիւ-

կը շարունակէ իր ողորմութիւնները: Նահապետ  
նահապետի ետևէ, պատգամարեր պատգա-  
մարերի ետևէ, մարդարէ մարդարէի ետևէ  
կը խրկէ՝ մտիկ չեն ըներ անոնց: Իր Միածին  
Որդին ծառայի կերպարանք կ'առնէ, խիստ  
հեղութեամբ և խոնարհութեամբ կը մօտենայ  
անոնց ու կը խօսի, խօսքով ու գործքով կը  
խրատէ . անոնց բարի օրինակ կ'ըլլայ . դառն  
և անարդ մահուամբ կը մեռնի, երկնից դուռը  
կը բանայ, իր ծառաները ամէն կողմ կը խրկէ  
որ խեղճ մեղաւորները հրաւէրեն . շատերը  
ալ կը մերժեն: Մարդուն աղատակամութեանը  
չի դպչիր, և միանդամայն անոր կորուստը  
չուզեր . աշխարհիս սկիզբէն մինչև այսօր ա-  
սանկ կ'ընէ: Ումանք իրեն խօսքին մտիկ կ'ընեն  
ու կը հնազանդին . շատերը կը մերժեն զինքը  
ինչպէս որ այսօր ալ կը տեսնուի: Ինքն իր եր-  
կայնստութեամբը մինչև այսօր մարդոց փրկու-  
թիւնը կը փնտուէ . բայց մարդիկ տգիտութեամբ  
կը մերժեն: Աատանան սկիզբէն իր աս բարե-  
րար կամացը դէմ կը դնէ . կը ջանայ որ մեղքը  
և աշխարհը սկրելի ցուցնէ մարդոց . իր բոլոր  
զօրութեամբը կ'աշխատի, ու կը հակառակի  
և կը պատերազմի Տէր Եհովանյին դէմ: Մարդիկ  
ասոր կը տեղեկանան . ոմանք Աստուծոյ կողմը  
կ'անցնին, խաչին դրօշակը կը վերցունեն, ո-  
մանք Աատանային յարելով և ծառայելով՝ Աս-  
տուծոյ դէմ զէնք կը վերցնեն: Աս գործը և

պատերազմը աշխարհիս սկիզբէն մինչև այսօր  
կը շարունակուի:

Երբ մեղք կար, աս պատերազմը կար. հիմա  
մեղք կայ, աս պատերազմը կայ: Աստուած կը  
կամենայ որ սատանան յաղթուի իրեն հետեւող  
ներուն կը յայտնէ իր կամքը. և զանոնք իրեն  
դործակից ու միջոց կ'ընէ աս դործը կատարելու  
և գլուխ հանելու: Աս մեծ ու փառտոր դործը  
կը դործեն բոլոր անոնք՝ որք իր Սուրբ Հո-  
գիովը նորոգուած են, ու Քրիստոսի դրօշակը  
վերցուցած են: Քրիստոնեայները աս փառաւոր  
պատերազմը կը պատերազմին իրենց բոլոր սըր-  
տովն ու զօրութեամբը. Ընկերութիւններ կը  
կազմեն. Եղբայրութիւններ կը հաստատեն, մեկ-  
զմէկու նեղութիւն կը կրեն, ստակներ կը վատ-  
նեն. աշխատանք՝ յոգնութիւն՝ տքնութիւն և  
կեանք չեն խնայեր աս փառաւոր դործը տեսնա-  
լու համար — մարդիկ Աստուծոյ դարձնելու հա-  
մար: Ասոնք թիւով քիչ են մինչև այսօր. քիչ  
են անոնք՝ որք հաւատարմութեամբ իրենց ըս-  
տացուածքն ու կեանքը դրեր են աս փառաւոր  
դործը տեսնալու համար: Քիչ են անոնք՝ որ  
կենդանի հաւատքով ու բոլոր զօրութեամբ  
կ'աշխատին. որ կը հաւտան ու դիտեն թէ՝ աս  
դործը մեծ է, թէ ասիկայ յաւիտենականու-  
թեան մէջ մեծամեծ վարձքեր ունի: Քիչ են  
անոնք՝ որ դիտեն թէ աս դործը Աստուած և  
իր բոլոր հրեշտակները կը նկատեն. Քիչ են

անոնք՝ որ դիտեն թէ աս փառաւոր պատերազ-  
մին մէջ իրենց սատանային տուած բոլոր հա-  
րուածները կը համրուին Ամենասուբրը Երրոր-  
դութենէն և սուրբ հրեշտակներէն:

ՆԵՐԴՈՒԵՄԱՅԻ Էպուրուած, ո՞վ է

1. Անոնք՝ որ աս դործին վախճանը չեն  
նկատեր: Ասանկները Ցէրոյը դործը արհեստ  
մը սեպելով անոր մէջը կ'աշխատին: Կը մոտածեն  
թէ՝ «մարդ մը անդործ կեանք անցընելու չէ».  
ամէն մարդ արհեստ մը կ'ընտրէ իրեն համար  
ու կ'ընէ. ես ալ ասիկայ կ'ընեմ, մանաւանդ  
ապրուատը դիւրին կը հոգացուի, աշխատանքը  
ծանր չէ, ուրեմն աս արհեստը ընտրել խելա-  
ցութիւն է»: Աս նենդութիւն է քանզի արհես-  
տին ինչ ըլլալը հասկըցած չէ ընողը. խարդա-  
խութիւն է որ մէկը իր ըլ դիտցած դործին մտնէ,  
դիտցողի պէս, ու վարձք առնէ:

2. Անոնք՝ որ թէւ դիտեն աս դործին ինչ  
ըլլալը ու վախճանը, բայց սրտանց չեն աշխա-  
տիր: Ասանկները իրենց բոլոր ըրածները թու-  
լութեամբ և անհոգութեամբ կ'ընեն: Զեռք  
կը զարնեն դործին, մէջը կը դտնուին, դործող  
կ'երենան, բայց այնչափ անտարբեր են, որ կը  
սեպեն թէ՝ ըլլայ ալ կ'ըլլայ ու չըլլայ ալ կ'ըլլայ =  
Ասոնք՝ ՚ի վաղուց հետէ առած մը ունին. «ԱՇ-  
ԽԱՎՈՂ Են, աղբեցնող Են: Այսինչ օրը՝ այսինչ  
բանը մեղք է չըսի՞նք, ի՞նչու կը դործեն,

թող չդործեն . Ես ի՞նչ կրնամ ընել՝ ժամանակին ու ժամանակէ դուրս չեն աշխատիր . անձնական դործ շատ ունին — առառուն ուշ կելին՝ իրիկունը կանուխ կը պառկին :

3. Անոնք՝ որ աս դործը կ'ընեն իրենց շահուն համար : Տէրը կ'ուզէ՝ որ աս դործը դործովները ՚ի մաս իւրեանց անձին դործեն , ամէն բանի մէջ մաս ընեն . ան իրենց ըրած մասովնէ որ դործը աղէկ կը տեսնուի : Անոնք որ շահի համար կ'ընեն՝ Տէրովը ուղածին պէս չեն ըներ , ու նենդաւոր են , անանկ կը ցուցնեն աշխահին թէ՝ ՚ի մաս կ'աշխատին , քանի որ մաքերնին շահիլէ . սրտերը քննողը խաբել կ'ուզեն , ինք զինքնին կը խաբեն : Ասոնք մեղաւորները Աստուծոյ դարձընելու դործը մեծ բանի տեղ չեն դներ և զո՞վ որ տեսնան՝ միայն բան մը շահիլ կը խորհին անկէ . Երբոր մեղակից մը կ'ելլէ առջենին , փոխանակ անոր անմահ հօդիին վրայ խորհելու և օգնելու՝ անոր քսակին վրայ կը խորհին և իրեն հետ աշխարհիս վրայօք կը խօսին . իրենց վիճակէն դանդատներ կ'ընեն որ մարդուն միտքը ձգեն թէ՝ իրենց բան մը տալու է : Ասանկները աշառութիւն կ'ընեն . հարուստներուն պակսութիւնը բան մը չերեւար իրենց աչքին . ոսկին , ինչպէս որ ընդհանրապէս մեծատուններուն աչքերը կը կուրցնէ որ մահ կանացութիւննին և մեղքերնին չը տեսնան , անանկ ալ՝ աս խեղերուն աչքերը կը թմրեցունէ

որ հարուստները աղէկ ու բարի երկնան իրենց . անոնց առուները կը յաճախեն . զիրենք կը գովեն . անտես կ'ընեն խեղճ աղքատները . ամէն դատի մէջ կամ յանցաւոր կը հանեն աղքատը կամ անոր իրաւունքը երեւան հանելու փոյթ չեն ըներ . և որ աւելի սոսկալին է անոր հետ առնչութիւն չընելով անոր պղտիկ յանցանքը իրենց սրբակեաց խիզճը կը շանթահարէ թէկնածեն . ասանկով գործին Տէրովը ուղածին հակառակը կը դործեն ու հետեւապէս նենդութիւն կ'ընեն . որ կ'ըսէ , “Իրաւունքը փնտուեցէք , զրկուածին ուղղութիւն ըրէք , որբին դատաստանը տեսէք , ու որբեարիին դատը պաշտպանեցէք” : Ասանկները յաճախ կը դանուին մարմնաւոր և քաղաքական դործերու մէջ . կը ճանչնան ու կը ճանչուին կառավարութենէն . դատունեցողներուն բարեկամ են , ու դատը լմնցուցածներուն թշնամի . զինքը տեսնողը իր քաղաքական դործերը միտք կը բերէ . մէկը աղէկ ու միւսը գէշ կը խորհի իր վրան . միտքերնին չի դար թէ՝ ասիկայ Աստուծոյ մարդն է — իր այգիին մէջ գործող մշակ մըն է , և ինչո՞ւ , քանզի գործին նշանները չտեսնուիր իր վրան : Այդիին Տէրը կ'ուզէ որ բոլոր իր մշակները անանկ նշաններ ունենան՝ որ զիրենք տեսնողը միտք բերէ Ան որ մշակին Տէրն է : Անոնք որ աս դործը մոռնալով իրենց շահին կը ծառային՝ նենդութեամբ գործող են , քանզի

առած վարձքերնին ատ գործը տեսնալու համար է, և ո՛չ թէ՝ իրենց գործը ։ Ասանկներուն կերած հայը գողութեան հաց է ու բոլոր վայելածնին սատանային վարձքն է որ կուտայ իր հրապուրանացը մտիկ ընող մշակներուն ։ Իրաւունք ունի<sup>8</sup> իր այդիին մէջ գործող մշակը՝ ուրիշէն վարձք առնելու. թէ որ առնէ՝ ի՞նչ անուն կուտայք ատ մշակին. անշուշտ «նենդաւոր, գող, անհաւատարիմ և չար» :

4. Անոնք որ աս գործը կ'ընեն պատիւ վաստըկելու համար։ Հպարտ և պատուամոլ մարդիկ ամէն միջոց ՚ի գործ կը դնեն իրենց փափաքները յագեցնելու համար. ոմանք ալ աս գործը միջոց կ'ընեն, բայց գործին ցէրոջը պատգամը կ'ըսէ «Արդ՝ թէ՛ ուտէք՝ թէ խմէք՝ և թէ ի՞նչ գործ որ ընէք, ամէն բան Աստուծոյ փառքին համար ըրէք»։ Միայն իր պատիւին և փառացը համար աշխատող պաշտօնեան, նենդաւոր է ։ Ասանկները Աստուծոյ և կրօնքին վրայ բարձր կերպով կը խօսին. և միշտ կը ցուցնեն՝ իրք թէ Աստուծոյ գործը կը գործեն. քանի որ իրենք իրենց գործը կը գործեն, և ասանկով նեն գաւոր կ'ըլլան ։ Ասոնք տեսեր ու լսեր են թէ աս գործը գործողները մեծ՝ երկելի ու պատուաոր մարդիկ սեպուած են աշխարհիս մէջը, օրինակի համար Պօղոս առաքեալ և իրեն պէս ները, ու կը յուսան թէ՝ իրենք ալ անոնց պատոյն պէս պատիւ պիտի ունենան. բայց կը մոռնան խեղճերը թէ՝ անոնք ժիր մշակներ էին. Աստուծոյ գործը կը գործէին, և գործին մէջը այնչափ ժիր ու աչքը բայց և հաւատարիմէին՝ որ ինքինքնին բոլորովին մոռցեր էին. ինչ որ իրենց շահ էր՝ ան ամէնը մնաս սեպեր էին. իրենք

մարդոց»։ Ասոնք ալ նենդաւոր են ու խորա մանկնենդաւոր, քանզի երկոյժնին շատ շիտակ կ'երկնայ, բայց իրօք գործին մէջը չեն. գործը չէ՛ որ կը հոգան՝ հապա ինքղինքնին ։ Ասանկ պաշտօնեայները շատ կը գովեն իրենց պաշտօնը, որ իրօք ալ գովելի է, որ ատովինքղինքնին մեծ ցուցնել կ'ուղեն և ո՛չ թէ իրօք պաշտօնը գովել կ'ուղեն ։ Իրենց պաշտօնին մէջը ունեցած նեղութիւննին յաճախ կը յիշեն, և միշտ կը խօսին թէ՝ աս բոլոր նեղութիւնները կը կրենք Աստուծոյ սիրոյն համար, կամ զԱստուած սիրենուս համար։ Շատ մը կրօնական բաներ կը գովեն ինքղինքնին գովելու համար. կը պարածենան իրենց խորունկ գիտնական ըլլալնուն վրայ. քանզի անանկ կը ցուցնեն՝ իրք թէ Աստուծոյ գործը կը գործեն. քանի որ իրենք իրենց գործը կը գործեն, և ասանկով նեն գաւոր կ'ըլլան ։ Ասոնք տեսեր ու լսեր են թէ աս գործը գործողները մեծ՝ երկելի ու պատուաոր մարդիկ սեպուած են աշխարհիս մէջը, օրինակի համար Պօղոս առաքեալ և իրեն պէս ները, ու կը յուսան թէ՝ իրենք ալ անոնց պատոյն պէս պատիւ պիտի ունենան. բայց կը մոռնան խեղճերը թէ՝ անոնք ժիր մշակներ էին. Աստուծոյ գործը կը գործէին, և գործին մէջը այնչափ ժիր ու աչքը բայց և հաւատարիմէին՝ որ ինքինքնին բոլորովին մոռցեր էին. ինչ որ իրենց շահ էր՝ ան ամէնը մնաս սեպեր էին. իրենք

իրենց պատիւը մոռցեր էին, ինքզինքնին աշխարհիս անարգները սեպած էին. անոր համար Աստուած իր ամէնաբարի նախախնամութեամբը մեծցուց և փառաւորեց հոս և հոդեղինաց աշխարհին մէջը՝ Բայց նենդութեամբ գործողը՝ որ ինքինքը պատուելու փառաւորելուզողն է, անոնց ունեցած փառքն ու պատիւը չպիտի ունենայ, անոնց առած վարձքը չըպիտի առնէ. քանզի անոնց պէս չի գործեր, հապա անոնց հակառակը՝ Աստուածէ միայն՝ որ զինքը փառաւորողները և իր գործը սիրով ու ջերմեռանդութեամբ գործողները կը փառաւորէ և պատիւի կը հասցընէ՝ Բայց ինքինքը փառաւորելուզողը՝ Աստուծոյ փառքէն կը զրկուի. քանզի նենդութիւն կ'ընէ՝ Եւ Աստուած ալանանկ տնօրիներէ, որ փառք ու պատիւը սուած բաները՝ զիրենք վինտուողներէն կը փախչին. ու զիրենք չը վինտուող հեղերուն և խոնարհներուն քովը կ'երթան ու փրանին կը հանդչին:

Անկեղծ ու հաւատարիմ մշակը կամ զինուորը պէտք է որ արթուն ըլլայ. աչքը բաց, շարունակ նայի թէ՝ ի՞նչ կայ ընելու, ի՞նչ պարագայի տակ է. գործը ի՞նչպէս է՝ իր գործը տեսնալու կողմանէ բոլորովին աչք ու ականջ կտրելու է՝ Ուրիշներն ի՞նչպէս գործեցին. յաջողութիւն ինտոր գտան, հիմա ի՞նչ խորհուրդ կայ գործին վրայ. խելացի մարդիկ ի՞նչ ընթացք կը բռնեն աս գործին մէջը, ի՞նչ ընեմ որ ես ալ յաջողիմ

— գործին բնութիւնը, իր զօրութիւնը և իր զօրութեան աղբիւրը կը նկատէ՝ Զօրապետին հրամանին զգուշութեամբ կը նայի, կը տքնի որ չըլլայ թէ՝ զօրապետէն հրաման մը ելած ատենը ինքը քնացած գտնուի:

Հոգեոր գործին ու պատերազմին մէջը հիմա շատ արթնութիւն պէտք է. քանզի թէև մեր պարտաւորութեանց նկատմամբ մեզի համար հարկ եղած հրամանները Աւետարանին մէջը գրուած են, բայց նոր նոր պարտաւորութիւններ ալ կ'ելլեն առջևնիս Աստուծոյ ամենիմաստ նախախնամութեամբը՝ թէ որ արթուն ու զգաստ չըլլանք, հրամանները չենք լսեր. կը յաղթուինք, գործը ետ կը մնայ, պատեր չենք առներ:

Պատերազմի մէջ եղող զինւորը պէտք է որ մոռնայ ինքինքը. հրաման ելած ատենը անմիջապէս վազելու է. նայելու չէ բնաւ թէ՝ ատ հրամանը իրեն անձնական նեղութիւն ու ցաւ պիտի բերէ՝ արդեօք: Թէ որ մշակը իր գործին մէջ բժախնդրութեամբիրեն ախորժելի պարագաները վինտուէ՝ գործը ետ կը մնայ: Օրինակի համար մշակը շուքէն կ'ախորժի, կ'ուղէ որ շուք տեղը գործէ, քանզի իրեն գիւրին կ'ըլլայ և քանի որ շուքը իր հետը չկրնայ պարացունել եթէ ինքը երթայ ու շուք տեղուանք նստի, գործին մեծ մասը տեղը պիտի մնա. ասանկ ալ հոգեոր գործերնուս մէջը, մեզի նեղութիւն

շատ կը պատահի, անալորժ բաներ շատ կը պատահին, թէ որ ատ պարագային տակը չը գործենք, կարելի է ալ բնաւ գործելու արտօնութիւն չունենանք, մեղի անախորժ երևածարդոցը թէ որ չը խօսինք ու չը քարողենք, հաւանականաբար մինչև որ մեղի ախորժելի երևածաները ծնանին, մենք մեռած ու գերեզմանը դրուած պիտի դտնուինք Զգուշութեամբ ճիշտ հրամանը կատարել նայելու է. կ'ուղէ թողար հրամանը կատարելը մեր աչքը՝ ոտքը և թեւը վնասող բան մը ըլլայ. բնաւ վնասը նը կատելու չէ ։ Հրամանին հնազանդելը թէ որ մեր շահին ու պատիւին ալ դպի այսուամենայիւ հնազանդելու և անմիջապէս ՚ի գործդնելու ենք ։ թէ որ երկրագործը փուշէ վախնայ, չի կրնար իր գործը հաւատարմութեամբ կատարել։

Մարդ մը իր ուշադրութիւնը միայն մեկ բանի մը կրնայ տալ. կամ ինք իր անձին և կամ իր Աստուծոյն, կամ մարդս ինքինքը պատուելու է և կամ իր Աստուածը ։ Հաւատարիմ և աննենդ մշակը՝ իր բոլոր ուշադրութիւնը Տէրոջ գործին կու տայ. բայց իր անձին ու աշխարհին վեր ՚ի վերոյ կը նայի ։ կամ աւելի աղեկ կ'ըլլայ որ ըսեմ, ինք իր անձը այնչափ կը նկատէ որչափ որ գործին հարկաւոր է ։ Բայց ան որ իր բոլոր ուշադրութիւնը իր անձին կու տայ, ու գործն ալ կը հոգայ իր անձին համար՝

նենդութեամբ գործող է, ու դորձ չի կրնար տեսնալ ։ Նենդութեամբ գործողը՝ հարկաւ վեր ՚ի վերոյ կը նայի գործին. Տէրոջը խօսքին հակառակ կու գոյ որ կ'ըսէ. «թէ որ մէկը իմ ետևէս գալ կ'ուղէ, թող իր անձը ուրանայ ։ Ով որ իր խաչը չը վերցըներ՝ ու իմ ետևէս գար, չկրնար իմ աշակերտս ըլլալ ։ Մարդ մը չկրնար երկու տէրոջ ծառայութիւն ընել. ինչու որ կամ մէկը պիտի ատէ և միւսը սիրէ. կամ մէկը պիտի մեծարէ և միւսը արհամարէ, չէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամնայի» ։ Ուստի անոնք որ սրտանց իրենց անձին ու աշխարհին կը ծառայեն, ու առ երևոյթս Աստուծոյ կը ծառայեն, անոնք են նենդութեամբ գործողները. և անոնք են որ անիծեալ են ։

Անձեւ բայց, ի՞նչ ըսել է ։

Անձեւ բայց Աստուած է և Անոր ըստոր հրամանները «Ասաց ու եղև» են ։ Անանկ որ կրնանք ըսել թէ՝ Տէրոջը Այդիին մէջ նենդութեամբ գործողը անիծեալ է, և պիտի ըլլայ ։ Անիծեալ ըլլայ չարիքի հանդիպի նեղութեան հանդիպի ըսել է ։ Նենդաւոր գործողը ի՞նչ չարիքի կը հանդիպի ։


1. Խղճմտանքի խայթով կը տանջուի, և պիտի տանջուի ։ Բարերարն Աստուած անանկ տընօրիներ է, որ աննենդ գործողներուն խիղճերը

շատ հանդարտ ու հանդիսատ կ'ըլլան . ամէն պարագայի տակ հանդիսատ է՝ խիղճերնին . Աստուծոյ երեսին քաղցր լցուար կը տեսնան . անով աս ցաւոց ձորը կը քաղցրանայ իրենց . ասոր դառնութիւնները կ'անցնին , ցաւերը կը թեթևնան , վիշտերը կը մեղմանան : Ասիկայ ա՞ն մեծ ու փառաւոր վարձքին ճաշակն է , որ հաւատարիմ գործողը հոս կը վայելէ : Բայց նենդաւորն իր խղճին ահարկու նեղութիւնը շարունակ կը կրէ : Իր կերած խմած և ուրախացած ատենը խիղճը կ'ըսէ՝ նէնդառ և Ռուրիչներէն գովուած ատենը՝ երեսը կը խնդայ , բայց ներսէն խիղճն իր սիրտը կը ծակէ և դառնցաւերով կը լցենէ : Շահած ատենը խիղճը ներսէն կը պուայ՝ առ հողանիւնն է . առոր հաշվեստիրտաւ Նենդաւոր գործողին խիղճը անմարելի կրակի պէս ամէն պարագայի տակ կ'այրէ կը մաշէ և կը խորովէ զինքը . մանաւանդ մանաւանդ հիւանդութեանց և մահերու լուր առած ատենը . ու արթնութեանց ատեն : Նենդաւոր գործողը՝ ի պաշտօնէ ստիպեալ կը քարողէ որ մարդիկ արթնան . շատ անդամ չի պատահիր , բայց կրնայ ըլլալ , որ իր ժողովուրդը Աստուծոյ Հոգին ինդրեն , ու Հոգին ալ իրօք գործէ հոն , ան ատենը ինք առաւել ևս կը տան-ջուրի և կ'այրի ու կը մաշի իր խղճովը : Աս անէծքը ահարկու անէծք մըն է , քանզի մարդուս մէջն է ու ներսէն կ'այրէ . անոր վէրքն ու հարուածները խիստ խորունին են : Աս անէծքը հոգիին փակած է , մահուան ատենը փոխանակ անկէ զատուելու՝ իր ձայնը աւելի կը բարձրացընէ . իր կիզիչ և տոչորող զօրութիւնը կը կրկնապատկուի և կ'եռուապատկուի : Կան անէծքներ որ մինչև գերեզման կ'երթան մարդուս հետը ու հոն իրմէ կը զատուին , աս անանկ չէ . գերեզմանէն ետքն ալ հոգիին հետն է ու մէջն է . քանի որ հոգին կայ՝ աս ալ կայ . ասոր տեղութեան չափը ահարկու յաւիտենականութիւնն է . իր ձայնին բարձրանալն ու տանջող զօրութեան աւելնալն ալ բոլոր յաւիտենականութեան մէջ պիտի ըլլայ . հաղարաւոր ու միլիոնաւոր գարեր պիտի անցնին ու աս անէծքը չպիտի անցնի , և չանցնելէն զինի՝ իր կիզիչ զօրութիւնը կ'աւելնայ երթալով կ'աւելնայ ու կ'աւելնայ : Ա՞հ , ահարկու անէծք . քու վրադ խորհիլը ու խօսկիլը անդամ նեղութիւն է , հապա գուն ի՞նչ ես , և ի՞նչ պիտի ըլլաս : Ո'վ Տէր , մեզ բոլոր հոս գտնուողներս աղատէ աս ահարկու անէծքը յառաջ բերող նենդութենէն :

որ դժնուի՝ ան ալ հետը կը գտնուի . իրմէ զատուելու ճար չկայ : Աս ահարկու անէծք մըն է , քանզի մարդուս մէջն է ու ներսէն կ'այրէ . անոր վէրքն ու հարուածները խիստ խորունին են : Աս անէծքը հոգիին փակած է , մահուան ատենը փոխանակ անկէ զատուելու՝ իր ձայնը աւելի կը բարձրացընէ . իր կիզիչ և տոչորող զօրութիւնը կը կրկնապատկուի և կ'եռուապատկուի : Կան անէծքներ որ մինչև գերեզման կ'երթան մարդուս հետը ու հոն իրմէ կը զատուին , աս անանկ չէ . գերեզմանէն ետքն ալ հոգիին հետն է ու մէջն է . քանի որ հոգին կայ՝ աս ալ կայ . ասոր տեղութեան չափը ահարկու յաւիտենականութիւնն է . իր ձայնին բարձրանալն ու տանջող զօրութեան աւելնալն ալ բոլոր յաւիտենականութեան մէջ պիտի ըլլայ . հաղարաւոր ու միլիոնաւոր գարեր պիտի անցնին ու աս անէծքը չպիտի անցնի , և չանցնելէն զինի՝ իր կիզիչ զօրութիւնը կ'աւելնայ երթալով կ'աւելնայ ու կ'աւելնայ : Ա՞հ , ահարկու անէծք . քու վրադ խորհիլը ու խօսկիլը անդամ նեղութիւն է , հապա գուն ի՞նչ ես , և ի՞նչ պիտի ըլլաս : Ո'վ Տէր , մեզ բոլոր հոս գտնուողներս աղատէ աս ահարկու անէծքը մշակը երեւան կ'ելլէ , ու Աստուծ-

մէ ճշմարիտ լոյս առնելով և ուրիշներուն հաշորդելով խեղճ նենդաւոր գործողները կը խայտառակուին։ Երբեմն աս բանը կը յայտնուի նենդաւորին մեռնելին ետքը. ու բանը հասկցողները կը սկսին նախատել անոնց (նենաւորներուն) գերեզմաններն ու յիշատակները։ թէ որ մէկը աս անէծքին վրայ վեր՚ի վերոյնայի՝ շատ բան չի տեսնար. բայց թէ որ քիչ մը խորհի վրան, պիտի տեսնայ թէ՝ աս ահարկուբան մըն է։ Ասոր վրայ խորհնեցէք։ Ահարկուբան չէ, թէ որ մէկը ուրիշներուն անանկ հասկցնէ թէ՝ ինքը հաւատարիմ գործող մըն է. իր գործելուն համար անոնցմէ ուտէ ու խմէ, և ետքը յանկարծ հասկնան թէ՝ ինքը ուրիշ բան չէ, հապա միայն խարդախ ու կեղծաւոր և նենդաւոր գողմը, ու ըստ այնմ նային իրեն և իր գերեզմանը ու յիշատակը նախատեն ու անարդեն։ Բան մը չկայ ծածուկ որ պիտի չյայտնուի, նենդաւորին նենդութիւնը հոսալ պիտի յայտնուի հաւանականաբար և յաւիտենականութեան մէջնալանշուշտ. հոն անշուշտ պիտի յայտնուի. քանզի գրուած է թէ՝ բոլոր ծածուկ բաները պիտի յայտնուին ու հաշիւի առնուին։ Մտադրութիւննիս գործնենք ասոր։ Տէր Աստուած դատաստանի օր մը որոշեր է, անօրը բոլոր ազգերը ու ազինքները մէկաեղ պիտի ժողվէ. Ագամէն սկսելով մինչև վերջին մարդը հոն պիտի դտնուին. բոլոր սուրբ հրեշտակները

և հրեշտակապեանները հոն պիտի դտնուին. հոն պիտի ըլլան բոլոր բարոյական էակները—բոլոր բարին ու չարը զանազանողները. բոլոր անոնք՝ որք գիտեն թէ ի՞նչ է պատիւ և ի՞նչ է անպատւութիւն։ Ան բոլոր հանդիսականներուն առջեր խեղճ նենդաւորին նենդութիւնը երեան պիտի ելլէ. բոլոր հանդիսականները պիտի հասկնան. ու անոնց մէջը փառք ու պատիւ ունեցող հաւատարիմ գործողները՝ մարդս ու սուրբ հրեշտականները նախատական աչքով մը պիտի նային նենդաւորին վրայ. աս ահարկու անէծք չէ։ Ո՛րչափ աւելի ահարկու անէծք է, որ նենդութենէ գարշաղ սուրբ ու արդար Դատաւորը պիտի ըսէ. երթայք յինէն անիծեալք. Մէկդի գացէք ինձմէ անիծեալներ, ալ իմ երեսս չըպիտի տեսնաք, գայէք՝ ալ իմ հետա բան մը չունիք ինչպէս որ չունէիք ալ. գուք որ իմ գործս նենդութեամբ գործեցիք, զիս նախատեցիք, բնաւ չխորհեցաք որ իմ ամենատեսաչքերս ձեր բոլոր ըրածները կը տեսնան, ու համարձակեցաք ինձի պէս մէկը նախատելու և անարդելու. Գացէք յաւիտենական նախատանաց և անարդանաց. իմ ձեզի տուած պատիւմս իմ մեծութեանս համեմատ պիտի ըլլայ, քանի որ ես կենդանի եմ՝ գուք ալ կենդանի պիտի ըլլաք ու պիտի տանջուիք առ տանջանքը իրաւացի է, քանզի գուք չամարձակեցաք ինձի պէս Աստուած մը—ԱՅ ու փառաւորեալ Աս



տուած մը անարդելու։ Դացէ՛ք, հասկցէ՛ք թէ՛  
զԱստուած խարողները ինքինքնին կը խարեն,  
ու անոր ցաւը յաւիտեանս պիտի կրեն։ Դուք  
որ լսեր ու քարողեր ալ էիք թէ՛ կենդանի Աս-  
տուծոյ ձեռքը իյնալը սոսկալի բանէ, ու հաւ-  
տացած չէիք, և անհաւատութեամբ նենդու-  
թիւն ըրիք, հիմա անձամբ փորձը առէ՛ք թէ՛  
իրօք սոսկալի և ահուելի բանէ կենդանի Աս-  
տուծոյ ձեռքը իյնալը։ Դուք ձեր մարդ—ստո-  
րին էակ մը ըլլալովը իմ խօսքիս հաւատարմու-  
թիւն շընելով, թէ ինծի յանձնուելնիդ աղէկէ,  
ու ձեր անձերուն աղէկ երեցած բաները փըն-  
տրուելով զիս ու իմխօսքերս ոտքերնուգ տակը  
առիք։ Այսօր ես ալ աս բոլոր բարոյական էակ-  
ներուն իմսրբութիւնս ու փառքս և զօրութիւնս  
ցուցնելու համար՝ ձեզ ոտքիս տակը կ'առնեմ,  
ու իմ Աստուածային ահարկու զօրութեամբա՝  
ձեզ կրակով ու ծծումբով վառած լիճը կը  
ձգեմ, որ հոն յաւիտենական անյուսութեան և  
շօշափելի խաւարին ու անվախճան տանջանացը  
մէջ հասկնաք թէ՛ զԱստուած անարդելուն ու  
նախատելուն և իր գործը նենդութեամբ գոր-  
ծելու ցաւն ու պատիժը ի՞նչ է։

Ա՞հ ։ իմ խելքս չասնիր, իմ լեզուս չկրնար  
պատմել թէ՛ զԱստուած նախատել ի՞նչ մեծ  
բանէ ու անոր պատիժը ի՞նչ մեծ ու ահարկուէ։  
Բայց ստուգութեամբ գիտեմ թէ՛ նենդու-  
թեամբ գործողը առ պատիժին պիտի հանդիւ-

պիւ Ո՛վ Տէր, մեզ ամէնքս ան մեծ ու ահարկու  
պատիժը բերող նենդութենէն պահէ,

Դայցէ՛ք, դուք որ առ երեսոյթս իմն կ'երեւ-  
նայիք և սրտով ու դիտաւորութեամբ հաւասար  
էիք գողերուն՝ շուներուն և մարդասպաննե-  
րուն։ Դացէ՛ք անոնց ընկեր եղիք, յաւիտե-  
նական ընկեր—անոնց հետ մէկ տեղ կրեցէ՛ք  
զԱստուած նախատողներուն ցաւն ու տան-  
ջանքը Ո՞հ իմ Եղբայրներս, մենք թէ որ նեն-  
դութեամբ գործենք, ի՞նչ երեսով պիտի բնա-  
կինք յաւիտեանս ա՞ն գողերուն՝ շուներուն և  
մարդասպաններուն հետը, որ հիմա փարիսե-  
ցութեամբ անոնց հետը խօսիլ անդամ չենք  
ուղեր, որ ըլլայ թէ՛ մեզ ալ անոնցմէ գիտնան։  
Մենք՝ որ հիմա կ'անարդենք ու կը նախատենք  
զանոնք, զգուանոք ու գարշելով կը խօսինք  
հետերնին, ի՞նչ ամօթալի բան պիտի ըլլայ ա-  
նոնց հետը զյոդ և անոնցմէ աւելի անարդ սե-  
պուելով իրենք ըլլան մեր յաւիտենական ըն-  
կերները. միատեղ մնանք յաւիտեան, միատեղ  
կրենք յաւիտենական սոսկալի տանջանքները.  
միենոյն յաւիտենական բաժինը ունենանք ան-  
մարելի կրակը և անմահ որդերը, աս ինչ ահար-  
կու անէծք է։ Ով Տէր, մեզբոլոր հոս գտնուող-  
ներս հեռու պահէ աս ահարկու անէծքը բերող  
նենդութենէն։ Աս աղօթքը մեր կենաց բոլոր  
օրերուն մէջը ընելու ենք ։ մեզի խիստ հար-  
կաւոր աղօթքը մըն է ։ քանզի մենք ամէնքս

որ հոս ենք մշակի երեղյթը ունինք—ինքղինք նիս այդին մէջը գործող հրատարակեր ենք. թէ Աստուծոյ և թէ մարդոց ցուցուցեր ենք թէ մենք Տէրոջը գործը գործողներ ենք: Ի՞նչ ընենք որ աս ազօթքնիս լսուի, պատասխանուի և մենք աղատինք աս ահոելի անձքէն: Ամենահաւատարիմ գործողին նայինք, մեր Տէր Յիսուս Քրիստոսին. Քրիստոսին շաւիղներուն հետեինք. դուք ասոր ի՞նչ նշանակելը գիտէք կը յուսամ, բայց աղէկ կ'ըլլայ որ հոս յիշենք թէ՝ հաւատարիմ գործողը ի՞նչ նկատմամբ Անոր նայելու է:

1. “Չեզմէ ամէն մէկը նոյն միտքը թող ունենայ, որ Քրիստոս Յիսուսի մէջն էր. որ Աստուծոյ կերպարանքը ունենալով, յափշտակութիւն մը չսեպեց Աստուծոյ հաւատար ըլլալը. հապա անձը ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման ըլլալով. և կերպարանքովը մարդու պէս գտնուելով. ինքինքը խոնարհեցուց՝ մինչև մահուան հնազանդ եղաւ, ու ան ալ խաչին մահուանը”։ Երբ որ Ամենահաւատարիմ գործողը այդին պիտի մտնար, գործը պիտի սկսէր, ծառայի կերպարանք առաւ. ինքինքը խոնարհեցուց, մահուան հընաղանդ եղաւ։ Ո՛վ որ կ'ուղէ հաւատարիմ գտնուիլ ասանկ ընելու է. ուրիշ ճամբայ չկայ. Իրմէ աւելի խելացի չենք, որ իրմէ աղէկ կերպ գտնանք աս գործը սկսելու, յառաջ տանելու,

հաւատարիմ գտնուելու և փառաց պսակն առնելու։ Խոնարհեցէք ուրեմն, իմսիրելի Եղբայրներս։ Զեր փառքը ու պատիւը մոռցէք, բնաւ գերեզմանէն ասդին ատոր խորհուրդ մի՛տաք։ Զեր և ձեր զաւկներուն մեծնալն ու փառաւորուիլը մոռցէք։ Զեր անձերը ունայնացուցէք ու ձեր ժողովուրդին մէջը սպասաւորի պէս երեցէք։ Անոնց ոտքերը լուացէք, ինչպէս որ Տէրը իր աշակերտներուն ըրաւ։ Աղքատները նկատեցեք, անոնց Աւետարան քարողեցէք. գալիք հարստութիւնները յիշեցուցէք անոնց ույոյս տուէք։ Սգաւորներուն և հիւանդներուն քովը յաճախեցէք. անոնց արցունքներուն հետը ձեր արցունքն ալ խառնեցէք։ Աս փառաւոր գործին համար որչափ որ շատ անարդուիք ու նախատուիք, այնչափ շատ ձեր Տէրոջը պիտի նմանիք ու յաջողութիւն դտնէք։ Խոնարհեցէք տղաքներուն և անարդ սեպուածներուն հետը առնչութիւն ընելու. թողըլլայ որ ատ ընելնուդ համար անարդուիք ու նախատուիք։ Փառք՝ պատիւ ու հարստութիւն ըսուած բաները մեծամեծ ծանրութիւններ են աս գործիս մէջը հաւատարիմ գործողներուն. աս ծանրութիւնները ձեզմէ մէկդի թոթափեցէք որ դիւրութեամբ գործէք։

2. “Եւ աս միջոցիս աշակերտները իրեն կ'աղաչէին ու կ'ըսէին. Ռարբի՞հա՛ց կեր՞ Անիկայ ըսաւ անոնց. Ես կերակուր ունիմ ուտելու՝ որ

դուք չեք գիտեր։ Ուստի աշակերտները կ'ըսէին իրարու։ Արդեօք մէկը ատոր ուտելու բան մը բերա՞ւ։ Յիսուս ըսաւ անոնց։ Իմկերակուրս ան է՝ որ ես զիս խրկողին կամքը ընեմ, և անոր ԳՈՐԾԸ կ'ատարեմ։

Ահա՛ Ամենահաւատարիմ գործողը։ ահա՛ մեր առաջնորդը, լսեցէք ի՞նչ կ'ըսէ։ իմ կերակուրս ան է՝ որ ես զիս խրկողին կամքը ընեմ և անոր գործը կատարեմ։ Ասանկ ըրաւ ինքը, կը պահանջէ բոլոր գործողներէն որ ասանկ ընեն։ Յայտնի է, որ աս միջոցիս ինքը մէկ անարդ Սամարացի կնիկ մը՝ իր մեղաւոր ըլլալուն և Աստուծոյ գառնալու պէտք ունենալուն համար կը համոզէր։ աս էր ան գործը՝ որ ինք իր կերակուր ուտելէն աւելի վեր ու հարկի կը սեպէր։ Ասկէ կրնանք սորվիլ թէ՝ մենք ալ հարկ է որ աս գործը անանկ ժրաշանութեամբ գործենք՝ որ հացերնիս ետ ձգենք. մենք ալ ասանկ գործենք։ Գործեցէք, իմ սիրելի Եղբայրներ։, գործեցէք ժամանակին և ժամանակէ գուրս։ Բոլոր աշխարհային ու կորստական գործերը երկրորդական ու ոչինչ սեպեցեք, անոնք ամենը կ'անցնին ու գերեզմանէն ետքը կը մոռցուին։ Ամենէն անարդ և չնչին սեպուած մարդուն անմահ հոգին հոգացէք. անոնց գարձին համար իրիկունը ուշ պառկեցէք և առտուն կանուխ արթնցէք. թո՛ղ ձեր բոլոր աղօթքները ու խորհրդածութիւնները գործին վրայ ու համարը լսենք, սիրելի եղբայրներս, ու ան-

լան։ Տէրոջը գործէն աւելի հարկի գործ չունիք։ և ջանք ըրէք՝ որ չունենաք ալ։ Երբոր պատեհութիւն ունիք խեղճ մեղաւորի մը՝ իր մեղաւոր ըլլալը հասկցնելու և զինքը Քրիստոսի ուղղելու, չըլլայ որ ատ փառաւոր պատեհութիւնը կորսնցնէք ձեր անձնական գործերուն կամ պիտոյքներուն համար։ Ժրաշանութեամբ գործեցէք, որ նենդաւոր չգտնուիք։

Յ. “Երբոր Գագաթ ըսուած տեղը գացին, հոն խաչը հանեցին զանիկայ, և ան չարագործներն ալ մէկը աջ կողմէն՝ ու մէկալը ձախ կողմէն խաչեցին։ Եւ ըսաւ Յիսուս։ Հայր՝ թողութիւն տուր ատոնց, ինչու որ չեն գիտեր ի՞նչ կ'ընեն”։ Ահա Ամենահաւատարիմ Գործողը ուրիշ պարագայի մը տակ. բարձր ձայնով խաչին վրայ կ'աղերսէ, Հայր՝ թողութիւն տուր ատոնց, անոնց՝ որ զինքը աւաղակներուն կարգը գասեր էին, ու անարդ և սոսկալի խաչին վրայ գամեր էին, անոնց՝ որ առանց իրաւունքի զինքը սոսկալի և գառն տանջանքներուն մատներ էին, անոնց համար թողութիւն կը խնդրէ իր Հօրմէն։ Ո՛չ կը կանչէ, և ոչ կ'աղաղակէ, ոչ կը վիճի և ոչ կը կոռուի, գառնուկի պէս լուռ կը կենայ անիրաւ դատաւորին առջեր, որ մեզի սորվեցնէ թէ՝ ինտո՛ր վարուելու ենք մեզի անիրաւութիւն ընողներուն հետը. և թէ ինտո՛ր մինչև մեր վերջին շունչը գործելու ենք։ Աս ձայնը լսենք, սիրելի եղբայրներս, ու ան-

յիշաչար ըլլանք . ո՞չ վիճինք և ո՞չ կռուինք .  
 ուրիշները մեզի ինչ կ'ընեն թողընեն՝ ինքնինք-  
 նիս արդարութեամբ դատողին յանձնենք . և  
 գառնուկներու պէս լուռ կենանք : Թէ որ  
 հաւատարիմ գործողին չարչարանացը կցորդ-  
 ըլլանք , իր փառացն ալ հաղորդ պիտի ըլլանք :  
 Եւ իր քաղցր ձայնը պիտի լսենք , “Ապրիս բարի  
 ու հաւատարիմ ծառայ . մաի՛ր քու Տէրո՛ջդ ու-  
 րախութեանը մէջ” . քու ուրախութիւնդ ու եր-  
 ջանկութիւնդ՝ իմ մեծութեանս համեմատ պի-  
 տի ըլլայ անեզր՝ անչափ և մշտնջենաւոր ու-  
 րախութեան և երջանկութեան անցի՛ր : Վայելէ  
 փառք՝ պատիւ ու երջանկութիւն , իմ եղբայս ,  
 և ժառանդակիցս . իմ ժառանդակիցս պիտի  
 ըսէ մեզի փառաց Տէրը :

Թէ որ ասանկ ընենք , երանի՛ մեզի . երանի՛  
 մեզի , քանզի աս օրհնեալ ձայնը պիտի լսենք :  
 Բայց թէ որ չընենք , վայ , վայ , վայ մեզի .  
 յաւիտենական ու մշտնջենաւոր վայ :

1867 Յունիս 5

Գ. Մ. Շ.

Տէրչէնչ գիւղ

Տես 52

ՀՀ Ազգային գրադարան



NL0115038

